

Ն եր ա ծ ու թ յ ու ն

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎՕ) «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎՕ կողմից դրանց ամփոփման, ինչպես նաև ՀՀ ԱՎՕ կողմից մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում ամփոփված նյութերի հիման վրա (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական զեկույցներ):

1999թ. ապրիլից սկսած, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան:

Տեղեկատվական ամսական զեկույցները ամսական պարբերականությամբ ներկայացվում են հակիրճ, իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական:

Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում է «Մեթոդաբանական պարզաբանումներ» հավելվածը, որում հակիրճ ներկայացվում են հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների բնութագրերը, հաշվարկման մեթոդաբանությունը:

Ձեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկությունները զետեղվում են ՀՀ ԱՎՕ <http://www.armstat.am> ինտերնետային էջում (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>):

ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին (որին 2003թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) համապատասխան՝ *ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում*, <http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/> առկա է անգլերեն լեզվով Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունը, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎՕ կողմից վարվող *Ազգային ամփոփ տվյալների էջում* <http://docs.armstat.am/nsdp/> առկա են երկրի համապատասխան տվյալները:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների օրինակները պահպանվում են ՀՀ ԱՎՕ գրադարանում:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդ հրապարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ստուգելու, ինչի իրականացումը «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի (գ) կետի դրույթներին համապատասխան, պահանջում է լրացուցիչ ժամանակ:

Պայմանական նշաններ

երևույթը բացակայում է	-
տվյալներ չկան	...
չնչին մեծություն	0.0
ցուցանիշը չի հաշվարկվում	X
տվյալները ճշգրտված են	◇

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ: